ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 սեպտեմբերի 2024 թվականի թիվ 235 - Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ԵՎ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-26-Ը ՏԵՂԱՑԱԾ ՀՈՐԴԱՌԱՏ ԱՆՁՐԵՎՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 4-Ի ԹԻՎ 1043-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ ԱՂԵՏԻՑ ՏՈՒԺԱԾ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԳՐԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի թիվ 1043-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Նոյեմբերյան համայնքի արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի թիվ 117 արձանագրությունը, արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող մարզային հանձնաժողովի եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2024 թվականի հուլիսի 9-ի թիվ 186-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի՝ 2024 թվականի սեպտեմբերի 05–ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությունը.

որոշում եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերում 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով աղետի գոտում ֆիզիկական անձանց պատճառված վնասի փոխհատուցման կարգը հաստատելու

Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի թիվ 1043-ն որոշման համաձայն սույն որոշման հավելվածում ընդգրկված Նոյեմբերյան համայնքի Բագրատաշեն գյուղի բնակիչ՝ Դավիթ Հարությունյանին աղետի հետևանքով անհատական բնակելի տանը պատճառված վնասի փոխհատուցման նպատակով տրամադրել 3.200.000 ՀՀ դրամ՝ ըստ փոխհատուցման ուղղության:

2. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2024 թվականի հուլիսի 9-ի թիվ 186-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի թիվ 1043-ն որոշման հավելվածի «Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերում 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով աղետի գոտում ֆիզիկական անձանց պատճառված վնասի փոխհատուցման» կարգի 5–րդ և 6-րդ գլուխների պահանջների կատարումը:

3. Հանձնաժողովի նախագահին՝ յուրաքանչյուր ամսվա առաջին տասնօրյակում ինձ ներկայացնել տեղեկատվություն գործընթացի վերաբերյալ:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2024-09-07 09:25:44 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ք. Իջևան
06 սեպտեմբերի 2024թ.